Ավետիք Իսահակյան

Էն ամպի նըման խուլ որոտումով

Էն ամպի նըման խուլ որոտումով –
Սիրտըս դարդով լի՝ կըռիվ գընացի.
Էն ամպլ նման ժեռուտ սարերով,
Քուրի՛կ ջան, քեզնից հեռու գընացի …

Էլ մի՛ որոնիր քո ազիզ յարին
Կըռվից ետ դարձող կըտրիճների մեջ
Մենակ փընտրիր դո՛ւ իմ քաջ սևուկին
Անտեր խըրխընջող՝ լուռ դաշտերի մեջ …

Էլ մի՛ որոնիր քո ազիզ յարին
Իմ ընկերների ուրախ խընջույքում.
Բանձրիկ սարերից ոռնացող քամին
Վրաս մի բուռ հող կըգցե դաշտում …

Ու օտար մայրեր ինձի տես կուգան,
Սև հողիս վրա արցունք կըթափեն.
Ա՜խ, օտար քուրեր ինձի տես կուգան
Ու վրաս անո՞ւշ ծաղկունք կըթափեն …

1903
Ղազարապատ